ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Վերոհիշյալ հարցերն ու պատասխանները պատրաստվել են Դատարանի Քարտուղարության կողմից:

Սույն փաստաթուղթը չի պարտավորեցնում Դատարանին:

Այն նպատակ ունի տրամադրել ընդհանուր տեղեկություններ Դատարանի աշխատակարգի վերաբերյալ: Ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար ծանոթացեք Դատարանի կայքում (www.echr.coe.int) Քարտուղարության կողմից տեղադրված փաստաթղթերին – մասնավորապես՝ Դատարանի կանոններին:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
Council of Europe
67075 Strasbourg cedex
France
www.echr.coe.int

Ի՞նչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Ստրասբուրգում հիմնված միջազգային դատարան է: Այն կազմված է դատավորներից, որոնց թիվը համապատասխանում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան վավերացրած Եվրոպայի խորհրդի անդամ Պետությունների թվին (ներկայումս՝ 46)[1]: Դատավորները գործում են որպես անհատներ և չեն ներկայացնում որևէ պետության շահերը: Հայցադիմումների քննման հարցում Դատարանին աջակցում է Քարտուղարությունը, որը կազմված է հիմնականում իրավաբաններից՝ ծագումով անդամ պետություններից (որոնք հայտնի են նաև որպես իրավաբանական քարտուղարներ): Նրանք լիովին անկախ են իրենց ծագման պետությունից և չեն ներկայացնում ո՛չ հայցադիմողի, ո՛չ էլ որևէ պետության շահերը:

Ի՞նչ է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան միջազգային պայմանագիր է, որը կարող են ստորագրել միայն Եվրոպայի խորհրդի անդամ Պետությունները: Կոնվենցիան, որը հիմնում է Դատարանն ու սահմանում դրա գործունեության շրջանակները, պարունակում է այն իրավունքները և երաշխիքները, որոնք պետությունները ստանձնել են հարգել:

1 Ոչ բոլոր անդամ պետություններն են վավերացրել Կոնվենցիայի արձանագրությունները (լրացուցիչ իրավունքներ նախատեսող փաստաթղթերը): Այս առարկայի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել մեր ինտերնետային կայքում:

Ո՞ՐՆ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԵՐԸ:

Դատարանը գործադրում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան: Դրա խնդիրն է երաշխավորել Կոնվենցիայում ամրագրված իրավունքների և երաշխիքների հանդեպ հարգանքը անդամ Պետությունների կողմից, ինչը Դատարանն իրականացնում է անհատների, երբեմն նաև պետությունների ներկայացրած բողոքները (որոնք հայտնի են որպես «հայցադիմումներ») քննելու միջոցով: Եթե այն գտնում է, որ անդամ Պետությունը ոտնահարել է վերոնշյալ իրավունքներից և երաշխիքներից մեկը կամ ավելին, ապա դատավճիռ է կայացնում: Դատավճիռները պարտադիր իրավական ուժ ունեն, և խնդրո առարկա պետությունները պարտավոր են ենթարկվել դրանց:

Ե՞ՐԸ ԿԱՐՈՂ ԵՄ ԴԻՄԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆ:

Դուք կարող եք հայցադիմում ներկայացնել Դատարան, եթե համարում եք, որ անձնապես և ուղղակիորեն տուժել եք Կոնվենցիայում կամ դրա Արձանագրություններում ամրագրված իրավունքների և երաշխիքների ոտնահարումից: Խախտումը պետք է կատարված լինի Կոնվենցիան վավերացրած պետություններից որևէ մեկի կողմից:

ԻՆՉՊԻՍԻ՞ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՎՈՒՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ և ԴՐԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ:

Կոնվենցիան մասնավորապես պաշտպանում է՝

- կյանքի իրավունքը,
- քաղաքացիական և քրեական գործերում արդար դատաքննության իրավունքը,
- անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը,
- խոսքի ազատությունը,
- մտքի, խղճի և կրոնի ազատությունը,
- իրավավական պաշտպանության արդյունավետ միջոց ունենալու իրավունքը,
- սեփականության խաղաղ տնօրինման իրավունքը և
- ազատ ընտրելու և ընտրվելու իրավունքը:

Ի՞ՆՉ ԵՆ ԱՐԳԵԼՈՒՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ և ԴՐԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Կոնվենցիան մասնավորապես արգելում է՝

- խոշտանգումները և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը,
- կամայական և անօրինական կալանքը,
- Կոնվենցիայում ամրագրված իրավունքներից և ազատություններից օգտվելու համար՝ խտրականության դրսևորումը,
- Պետության կողմից իր քաղաքացիներին վտարելը կամ նրանց մուտքը պետություն արգելելը,
- մահապատիժը և
- օտարերկրացիների կոլեկտիվ վտարումը:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

Ո՞Ր ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԵՍ՝ ՈՐՊԵՍ ԱՆՀԱՏ, ԲԱՎԱՐԱՐԵՄ:

- Հայցադիմում ներկայացնելու համար պարտադիր չէ լինել Եվրոպայի խորհրդի անդամ Պետություններից որևէ մեկի քաղաքացի: Պարզապես իրավախախտումը, որի մասին բողոքում եք, պետք է կատարված լինի Կոնվենցիան վավերացրած որևէ

պետության կողմից և նրա «իրավասության» շրջանակներում, այսինքն տվյալ պետության տարածքում:

- Դուք կարող եք լինել անհատ կամ իրավաբանական անձ, օրինակ՝ ընկերություն կամ ընկերակցություն:
- Դուք պետք է ուղղակիորեն և անձնապես տուժած լինեք այն իրավախախտումից, որը Ձեր կարծիքով տեղի է ունեցել: Դուք չեք կարող ընդհանուր բողոք ներկայացնել որևէ օրենքի կամ միջոցի դեմ այն պատճառով, որ այն, օրինակ, անարդար է, ինչպես նաև չեք կարող հայցադիմում ներկայացնել այլ անձանց անունից (բացառությամբ այն դեպքերի, երբ վերջիններս հստակ նշանակել են Ձեզ որպես իրենց պաշտոնական ներկայացուցիչ):

Կա՞ն արդյոք գործընթացներ, որոնք պետք է վարվեն նախապես՝ ներպետական դատարաններում:

- Այո: Դուք պետք է տվյալ պետությունում սպառած լինեք իրավական պաշտպանության բոլոր միջոցները, որոնք կարող են շտկել այն իրավիճակը, որի վերաբերյալ Դուք հայցադիմում եք ներկայացնում: Այսինքն, հարկավոր է բողոք ներկայացնել համապատասխան դատարան, որին պետք է հետևի դատարանի կողմից ընդունված որոշման բողոքարկումը, եթե դա հնարավոր է, և նույնիսկ հետագա բողոքարկումը բարձրագույն ատյան, ինչպես օրինակ՝ Գերագույն կամ Սահմանադրական դատարան, եթե դրանք գործում են երկրում:
- Բավարար չէ պարզապես դիմել այդ միջոցներին: Անհրաժեշտ է բարձրացնել այն հարցը, որի դեմ բողոքում եք, այսինքն՝ Կոնվենցիայի խախտման առարկան, որն ըստ Ձեզ տեղի է ունեցել:
- Տեղական մակարդակում կայացված վերջին որոշումից հետո (այսինքն՝ բարձրագույն ատյանի վճռից հետո) Դուք միայն չորս ամիս ժամանակ ունեք հայցադիմումը ներկայացնելու համար: Նշված ժամանակահատվածից հետո Ձեր հայցադիմումը չի կարող ընդունվել Դատարանի կողմից:

Ու՞մ դեմ կարող եմ հայցադիմում ներկայացնել:

- Կոնվենցիան վավերացրած մեկ կամ մի քանի Պետությունների դեմ, որը կամ որոնք Ձեր կարծիքով՝ ուղղակիորեն Ձեզ առնչվող մեկ կամ մի քանի գործողություններով կամ բացթողումներով, խախտել են Մարդու իրավունքների եվրոպական Կոնվենցիան:
- Այդ գործողությունը կամ բացթողումը պետք է իրականացված լինի Պետության կամ Պետությունների մեկ կամ մի քանի պետական իշխանությունների (օրինակ՝ դատարանի կամ վարչական մարմնի) կողմից:
- Դատարանը չի կարող ուսումնասիրել անհատների կամ մասնավոր հաստատությունների, օրինակ՝ առևտրային ընկերությունների դեմ ուղղված բողոքները:

Ինչի՞ մասին կարող է լինել իմ հայցադիմումը:

- Ձեր դիմումը պետք է վերաբերի Մարդու իրավունքների եվրոպական Կոնվենցիայում ամրագրված իրավունքներից որևէ մեկին: Ենթադրելի խախտումները կարող են վերաբերել այնպիսի բազմաբնույթ խնդիրների, ինչպիսիք են օրինակ՝ խոշտանգումները և վատ վերաբերմունքը ազատազրկվածների հանդեպ, անօրինական կալանքը, քաղաքացիական կամ քրեական դատավարությունների թերությունները, Կոնվենցիայի իրավունքից օգտվելիս՝ խտրականության դրսևորումը, ծնողների իրավունքները, անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և հաղորդակցության հանդեպ հարգանքը, կարծիքի արտահայտման և տեղեկատվության տրամադրման կամ ստացման իրավունքների, ինչպես նաև հավաքներին կամ ցույցերին մասնակցելու ազատության սահմանափակումները, վտարումն ու արտաքսումը, ունեցվածքի առգրավումն ու յուրացումը:

Ինչպե՞ս դիմել դատարան, եթե համարում եմ, որ տուժել եմ Կոնվենցիայի դրույթների խախտումից:

Կարող եք նամակ ուղարկել Դատարան՝ հստակորեն շարադրելով Ձեր բողոքի մանրամասները, ի պատասխան որի կստանաք դիմումի ձև, որը հարկավոր է լրացնել և վերադարձնել: Կարող եք նաև միանգամից լրացնել և ուղարկել դիմումի ձևը[2]: Նամակը և/կամ դիմումի ձևը հարկավոր է ուղարկել հետևյալ հասցեով՝

The Registrar
European Court of Human Rights
Council of Europe
67075 Strasbourg cedex
France

- Կարելի է գրել Դատարանի պաշտոնական լեզուներից որևէ մեկով՝ անգլերեն կամ ֆրանսերեն, կամ Կոնվենցիան վավերացրած պետություններից որևէ մեկի պաշտոնական լեզվով:
- Եթե դիմումն ուղարկեք ֆաքսով, ապա պետք է դրա բնօրինակը ուղարկեք փոստով:
- Մի՛ եկեք Ստրասբուրգ Ձեր հայցը բանավոր ներկայացնելու համար: Դրանով հայցի քննությունը չի արագացվի, ոչ էլ որևէ իրավաբանական խորհրդատվություն կստանաք:
- Քարտուղարությունը կարող է Ձեր բողոքի հետ կապված լրացուցիչ փաստաթղթեր, տեղեկատվություն կամ բացատրություններ պահանջել:
- Դիմումի ձևը ձեռք բերելուց անմիջապես հետո պետք է այն ուշադիր և ընթեռնելի կերպով լրացնել և հնարավորինս արագ ուղարկել վերոհիշյալ հասցեով: Այն պետք է պարունակի՝
  - փաստերի և Ձեր բողոքների հակիրճ նկարագիրը,
  - հղում Կոնվենցիայում ամրագրված այն իրավունքներին, որոնք ըստ Ձեզ ոտնահարվել են,
  - տեղեկություն իրավական պաշտպանության այն միջոցների մասին, որոնց արդեն դիմել եք,
  - Ձեր հայցադիմումին առչվող պետական իշխանությունների կայացրած բոլոր որոշումների պատճենները (այս փաստաթղթերը Ձեզ չեն վերադարձվելու, ուստի անհրաժեշտ է ուղարկել միայն դրանց պատճենները) և
  - Ձեր՝ որպես հայցատուի, կամ Ձեր ներկայացուցչի ստորագրությունը:
- Եթե չեք ցանկանում բացահայտել Ձեր ինքնությունը, ապա հարկավոր է այդ մասին անմիջապես հայտնել Դատարանին՝ պատճառաբանելով Ձեր խնդրանքը: Նախագահը կորոշի, թե որքանով է հիմնավորված Ձեր խնդրանքը:
- Դատավարության նախնական փուլում պարտադիր չէ, որ Ձեր շահերը ներկայացվեն փաստաբանի կողմից: Այնուամենայնիվ, եթե ցանկանում եք Դատարան դիմել ներկայացուցչի միջոցով, ապա պետք է հայցադիմումի ձևի հետ ուղարկել Ձեր անունից հանդես գալու մասին նրան տրված լիազորագիր:

Որո՞նք են դատավարության հիմնական հատկանիշները:

- Դատավարությունը իրականացվում է գրավոր կերպով և Դատարանի կայացրած ցանկացած որոշման մասին Ձեզ կտեղեկացնեն գրավոր տեսքով: Հանրային լսումները բացառիկ դեպքերում են կայանում:
- Հայցի քննումը անվճար է:
- Թեև անհրաժեշտ չէ իրավական ներկայացուցիչ ունենալ գործի քննության սկզբնական փուլում, սակայն Դուք փաստաբանի կարիք կունենաք, երբ կառավարությանը տեղեկանա Ձեր հայցադիմումի մասին: Բողոքների ծանրակշիռ մասը, այնուհանդերձ, անընդունելի են համարվում:
- Դուք պետք է հոգաք միայն Ձեր սեփական ծախսերը (օրինակ՝ փաստաբանի ծառայությունների դեմ վճարելու կամ գործին առընչվող հետապոտություններ և հաղորդակցություն վարելու համար):
- Դիմումը ներկայացնելուց հետո կարելի է խնդրել իրավաբանական ներկայացուցչության՝ փաստաբանի ծախսերին ուղղված ֆինանսական օգնություն: Այս օգնությունն ինքնաբերաբար չի

2 Դիմումի ձևը կարելի է գտնել մեր ինտերնետային կայքում:

հատկացվում, և գումարները անմիջապես չեն տրվում, այլ միայն դատավարության վերջնական փուլում:

Ինչպե՞ս է անցկացվում դատավարությունը:

- Դատարանը պետք է առաջին հերթին որոշի, թե արդյո՞ք Ձեր հայցադիմումն ընդունելի է: Սա նշանակում է, որ գործը պետք է համապատասխանի որոշակի պահանջների, որոնք ամրագրված են Կոնվենցիայում (տես էջ 3՝ Որո՞նք են հայցադիմում ներկայացնելու նախապայմանները): Եթե պայմանները բավարարված չեն, ապա հայցադիմումը կմերժվի է: Եթե Դուք մի քանի բողոք եք ներկայացրել, Դատարանը կարող է որոշել, որ դրանցից մեկը կամ մի քանիսը ընդունելի են, իսկ մյուսները՝ ոչ:
- Եթե Ձեր հայցադիմումը կամ Ձեր բողոքներից որևէ մեկը հայտարարվում է անընդունելի, ապա այդ որոշումը վերջնական է և անբեկանելի:
- Եթե Ձեր դիմումը կամ Ձեր բողոքներից որևէ մեկը համարվում է ընդունելի, ապա Դատարանը կողմերին (Ձեզ և համապատասխան պետությանը) խրախուսում է բարեկամական լուծում գտնել: Երկու կողմերին էլ առաջարկվում է համաձայնության գալ և կարգավորել խնդիրը: Բարեկամական լուծման չհանգելու պարագայում, Դատարանը քննում է հայցադիմումն ըստ էության, այսինքն որոշում է՝ Կոնվենցիայի խախտում եղել է, թե ոչ:

Որքա՞ն ստիպված կլինեմ սպասել:

- Նկատի ունենալով գործերի ներկա կուտակումը՝ հնարավոր է, որ ստիպված լինեք սպասել մինչև մեկ տարի, նախքան Դատարանը կկարողանա ընթացք տալ Ձեր գործին: Որոշ հայցադիմումներ հնարավոր է ավելի շտապ քննվեն՝ ելնելով դրանց գերակայությունից, մասնավորապես այն դեպքերում, երբ հայցատուին վերահաս ֆիզիկական վտանգ է սպառնում:

Ինչպիսի՞ ակնկալիքներ կարող եմ ունենալ:

Եթե Դատարանը գտնում է, որ խախտում է տեղի ունեցել, այն կարող է որոշում կայացնել Ձեզ հատկացնել «արդար փոխհատուցում», որը դրամական գումար է՝ Ձեր կողմից կրված որոշակի վնասների դիմաց: Դատարանը կարող է նաև պահանջել, որպեսզի տվյալ պետությունը փոխհատուցի այն ծախսերը, որ Դուք կրել եք Ձեր հայցադիմումը ներկայացնելու համար: Եթե դատարանը որոշում է, որ խախտում չի եղել, ապա Ձեզ հարկավոր չի լինի վճարել որևէ լրացուցիչ գումար (օրինակ՝ պատասխանող պետության կողմից կրած ծախսերի դիմաց):

Խնդրում ենք հաշվի առնել հետևյալը՝

- Դատարանը իրավասու չէ չեղյալ հայտարարել պետական որոշումները կամ անվավեր ճանաչել պետական օրենքները:
- Դատարանը պատասխանատու չէ իրավիճակների կատարման համար: Դատարանի կողմից վճռի կայացումից անմիջապես հետո, դրա կատարման պատասխանատվությունը ստանձնում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն[3], որի խնդիրն է վերահսկել որոշման ի կատար ածումը և երաշխավորել հասանելիք փոխհատուցման վճարումը:

3 Նախարարների Կոմիտեն կապված է անդամ Պետությունների Արտաքին գործոց նախարարներից կամ նրանց ներկայացուցիչներից:

Ի՞նչ չի կարող ինձ համար անել Մարդու իրավունքների դատարանը:

- Դատարանը չի գործում որպես վերաքննիչ դատարան ի դեմս պետական դատարանների: Այն չի վերանայում հայցերը, չի կարող բեկանել կամ փոփոխել կայացած որոշումները:
- Դատարանն ուղղակիորեն Ձեր անունից չի միջնորդի իշխանություններին, որոնց դեմ Դուք բողոք եք ներկայացնում: Բացառիկ դեպքերում, սակայն, այն կարող է պահանջել ձեռնարկել ժամանակավոր միջոցներ: Սովորաբար Դատարանը դիմում է այդ քայլին, երբ հայցատուի առողջությանը լուրջ վտանգ է սպառնում:
- Դատարանը չի օգնի Ձեզ փաստաբան գտնել և չի վճարի՝ Ձեր հայցադիմումը կազմելու ծառայության համար:
- Դատարանը չի կարող Ձեզ տեղեկություններ տալ այն պետության իրավական դրույթների վերաբերյալ, որի դեմ ուղղված է Ձեր հայցադիմումը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

European Court of Human Rights
Council of Europe
67075 Strasbourg cedex
France
www.echr.coe.int

HYE

Design © ECHR · Photo © Shutterstock